

Բ. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ ¹⁾

ԱՂՋԻՐԻՐԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Նորադուզ. (62°50'30"—40°22'40"). Նոր-Բայազէտ քաղաքից գէպի արևելահիւսիս, մօտ երեք կիլոմետր հեռու, մի գեղածիծաղ գաշտավայրի վրայ փռուած է Նորադուզ գիւղը, որ հնումը Նորադուս կամ Նորատուաց գիւղ է կոչուել: Հազիւ մի կիլոմետր հեռու տարածուած է Սևանայ լիճը՝ սքանչելի տեսք ընծայելով գիւղին: Ոչ միայն այստեղի քրիստոնէական յիշատակարանները, այլ և ամենահին դամբաններն վկայում են, որ այստեղը շարունակ ընակավայր է եղել և այսօր էլ կարելի է միայն ցաւել, որ այս գաւառի կենտրոնական քաղաքն այստեղ չէ հաստատուած, մանաւանդ որ նաւագնացութեան էլ շատ յարմար է: Գիւղի արևմտեան կողմից անցնում է Գաւառագետը, ոչ միայն հիանալի գեղարքունիներ պարգևելով ընակիչներին, այլև ոռոգելով սրանց արտերն ու արօտատեղիները:

Գիւղի չորս կողմում, փոքրիկ բլրակների վրայ իբր պաշտպան հին դարերից ի վեր հսկում են չորս ցամառ խաչեր, որոնց տակ, այժմեան աւանդութեամբ, հանգչում են չորս նահատակ եղբայրների աճիւնները: Այս խաչերից հիւսիսայինի պատուանդանի վրայ գրուած է.

Անուամբն Աստուծոյ, ՈՀԵ (=1226) Թուիս, յիշխանութեան Աթարէկին Իվանայ, Աւագին, Շահանշահին... Խոշաքին սնուցածս Նորատուս, կացուցողիս, յորժամ Աստուծոյ բարկութիւնն շարժեցաւ, Սուլթանն Խորասանայ կոտորածս բազումս արար:

Գիւղի արևմտեան կողմում բարձրանում է այստեղի քրիստոնէական յիշատակարաններից ամենահինը՝ ս. Աստուածածին

¹⁾ Որովհետև գաւառի կենտրոնը, բուն Գեղարքունիքը, այս ոստիկանական շրջանումն է գտնւում, և բացի դրանից Բայազէտի հայ գաղթականները, որոնց ազգագրական ուսումնասիրութիւնը մեր այս աշխատութեան նպատակն է կազմում, գլխաւորապէս այս շրջանում են տեղաւորուած, ուստի և մենք յորժմար համարեցինք նախ այս ոստիկանական շրջանը նկարագրել:

կիսակործան եկեղեցին, որ կառուցուած է Թ. դարի վերջին, Սիւնեաց տէր՝ Գրիգոր Սուփանի եղբայր՝ Սահակի շանքով, որը և Յովհաննէս Զ. կաթողիկոսի ասելով թաղուած պիտի լինի այս եկեղեցու արևմտեան դրան մօտ (915 թուին)։ Եկեղեցին շինուած է սրբատաշ քարից, խաչաձև է, կամարակապ և անսիւն. երկարութիւնն է 10 լայնութիւնը՝ 8 և բարձրութիւնը՝ 9 մետր։ Զեղունը քանդուած է, աւանդութան ասելով, հրձիգութեամբ, լեզգիներէ ձեռքով, երբ ժողովուրդը նրանց բռնութիւնից ապաստանել է դրա մէջ։ Այժմ փայտածածկ է, Հարաւային պատի վրայ կայ արեղակնային մի ժամացոյց։ Շինութեան արձանագրութիւնը չի երևում, կան միայն հետեւեալները.

Հարաւային պատի վրայ, դռան վերև.

Թվին 25 (=1258) յիշխանութեան աստուածափառ տերանց մերոց Խօշաքին և Աթաբակ Սաթունին մեք Նորասուաց մեծ և փոքր...

Նոյն պատին, մի քիչ հեռու.

Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Նորասուաց ... Աստուծով ի վեր կալայ Գաւառին համար ՈԶԳ ջրին տան՝ այգւոջ գիւղին... վկաներս Աստուած է...

Արևմտեան պատին, մի խաչքարի վրայ.

Ի թուականութեան Հայոց ՆՈՅՆ (=996) ի Թագաւորութեան Գաղկայ և իշխանութեան...

Չնայած իւր քայքայուած դրութեան՝ այս հազարամեայ շէնքը այսօր էլ իբր գիւղի եկեղեցի է ծառայում։ Եկեղեցու շուրջը կային մի քանի շինութիւններ, մի մեծ սեղանատուն, որ վերջերս հասարակական հացի շտեմարանի էր փոխարկուած, մի քանի խցեր, սահայն մեծ մասն այժմ արդէն քանդուած է և տեղում զպրոցական շէնք կառուցուած։ Եկեղեցին պարսպապատ է, որի մէջ և շուրջը կան բաւականաչափ խաչարձաններ և հասարակ տապանաքարեր։ Ամենից աւելի ուշագրաւ է մի տապանաքար, 3 մետր երկարութեան, 76 սանտիմետր լայնութեան և 1,08 մետր հաստութեան։ Սրա երեսին նկարուած է մի զաւազան, որի երկու կողմը գրուած է.

Ես մելիք Ոհկէս տապանս շինեցի հօր իմում մելիք պար (էքին)։

Այս արձանագրութեան վերև քանդակուած է մի ռնկեղջիւր, որ կուռւմ է իւր վրայ ցատկած վագրի հետ. իսկ ներքեւում մի եղջերու՝ ոտների տակ մի վիշապ։

Այս տապանաքարի արևմտեան կողմը կանգնեցրած է մի խաչքար, որի ձևկատին գրուած է.

Կամաւն Այ ես Մելիք Բարէքս կանգնեցի զխաչս վասն փրկութեան հոգւոյ իմոյ: Մելիքսէթ կազմող. Բարէքին է խաչս:

Իսկ խաչքարի թիկունքին՝ գրուած է.

Կամաւն Աստուծոյ ես Մէլիք Բարէքս, եղբայրն իմ Ստեփաննոս քահանէն, որդին իմ Գունկչայ բէկն, հա(յ)րն իմ Գունդուզ աղէն, եկինք Գանձակայ, շինեցինք կարմունձս, շինեցինք շրջապատս, կանգնեցինք զխաչերս, որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս:

Գիւղի արեւելեան կողմը ձգւում է մի բլուր, որի վրայ տաճարածուծ է մի ընդարձակ գերեզմանատուն՝ բազմաթիւ զիղաքանդակ խաչքարերով զարդարուած: Այստեղ կան նաև երկու փոքրիկ մատուռներ, որոնցից մինի, հիւսիսայինի, միակ դրան աջ կողմը արձանագրուած է.

Ես Սարգսի թոռ Միրզատի որդի Ալէքսանս շինեցի սուրբ եկեղեցիս. թվ. ՌՃԿԳ. էր. (=1714)

Ես Սարգիս զրեցի անարժանս:

Ձախ կողմին՝

Ես Ալէքսանս, որ եկեղեցիս շինեցի, խիստ դառն ծանր ժամանակ էր:

Միւս մատուռի հիւսիսային պատի վրայ.

... Թագաւորութեան... որդի Մխիթարս որ եղէ առաջնորդ մեծահռչակ գիւղիս Նորատուաց, կամ եղև ինձ և կանգնեցի զխորանս, և զնշանքս տէրունական յիշատակ հոգւոյ իմոյ և Զուղային և հաւր իմո Մխիթարս և համաւրէն ննջեցեցոց իմոց, որք երկիր պագէք սմա, զմեզ յաղաւթս յիշեցէք:

Այս մատրան հիւսիսային կողմում կանգնած մի խաչարձանի պատուանդանի վրայ գրուած է.

Ի ՈԿ թվ. (=1211), ի ժամանակս բաբեպաշտ իշխանաց մերոց Զաքարէի և Իվանէի ես Մխիթար Փէճաբենց Դաւթի որդի, շնորհիւն Աստուծոյ և հրամանաւ մեծին Իվանէի եղէ առաջնորդ մեծահռչակ գեօղիս Նորա-

տուաց. կամ եղև ինձ կանգնել զխաչս ի փրկութիւն ննջեցելոց իմոց. որք երկրպագէք, յիշեցէք ի Տէր:

Գիւղից հաղիւ կէս կիլոմետր դէպի արևելահարաւ բարձրանում է սրբատաշ սև քարերով շինուած մի եկեղեցի, խարխուլ զմբէթով, որին Սիմէօն կաթողիկոսը Պափուց վանք է անուանում և որը կուսանաց անապատ է եղել: Արևմտեան պատի վրայի հետեւալ արձանագրութիւնը ցոյց է տալիս եկեղեցու հիմնարկութեան ժամանակը և շինողների անունները՝

Ի պարոնութեան Իվանէի և Շահնշահի *) ես Տէր Պետրոս վարդապետ հանդերձ եղբարբ ընչիւք և ստացուածովք շինեցի զեկեղեցիս:

Ըստ երևոյթին եկեղեցին շուտով աւերուել է, որովհետև հարաւային պատի վրայի հետեւալ արձանագրութիւնը խօսում է վերանորոգութեան մասին.

Ի Թաղաւորութեան վրաց... և ինքնակալ տէրութեան Իվանէի և Շահնշահի, հայրապետութեան տեսաւ Վրթանիսի (?)... ես Տրուպ... վարդապետս... զաւերեալ եկեղեցիս վանացս Նորատվաց... ի հալալ ընչից և ստացուածոց իմոց սակաւ և հաստատեցի հողւոյ... անջինջ և կարգեցի ինձ եղբարբս հանդերձ ի տարին է պատարագ զՅաւրութեան շաբաթի, որ առնեն աւրհնին յԱյ և որ խափանէ...

1344 թուին էլ գրուած մի արձանագրութիւնից երևում է, որ այս եկեղեցին կոչուել է ս. Գրիգոր.

Թվին 27Գ. Շնորհիւն Աստուծոյ և պարոնութեան իշխանաց իշխանին Հայոց Բուրթելին և Աստուածատուր զաւակաց իւրոց՝ իշխանաց Բէլքենայ, Իվանիկայ և Սաւակայ. ես ծառայ Աստուծոյ Աւագս վասն երկարութեան կենաց պարոնաց մերոց, կամակից եղէ շինութեան վանիցս, և ետու իմ հալալ ընչիւք գնած Նորատվաց ջրոյ վերայ մէկ ջրաղաց ի սուրբ Գրիգորս. միաբանք սահմանեցին ի տարին Գ. պատարագ ինձ Աւագիս. կատարիչք աւրհնին յԱստուծոյ:

*) ԺԳ. զարի սկզբին.

Ներքուստ ևս, արևմտեան պատին արձանագրուած է.

Ես Մխիթար Նորատուաց առաջնորդ որ կամակից և օգնական եղէ... վարդապետին և շինութեան սբ. Լուսաւորչիս և նա սահմանեց ինձ տարին երկու ժամ, սուրբ խաչի տաւնին. կատարիչք հրամանացս աւրհնին յԱստուծոյ:

Այս եկեղեցին անխնամ է թողնուած, մի գիւղացի փականք է դրել դռներին և երբեմնապէս մաքրում է, օգտուելով ուխտաւորների խաչամարտիներից. Լուսաւորչի տօներին թէ Նորադուղից և թէ շրջակայ գիւղերից բաւականաչափ ուխտաւորներ են գալիս:

Այս եկեղեցուց փոքր ինչ հեռու, մի խաչքարի պատուանդանի վրայ արձանագրուած է.

Ի Թվին Հայոց ՈԿ (=1211) ի Թագաւորութեան Աղին. ի պարոնութեան Իւանէին ես Քաջաղաւրս շինեցի զկամուրջս և կանգնեցի զխաչս:

Հին կամուրջը, որի մասին խօսւում է այստեղ, այժմ քանդուած է, միայն նրա տեղում այժմ մի հասարակ կամուրջ է ձեռնարկուած:

Գիւղի արևելահիւսիսային կողմում ևս կայ մի փոքրիկ, հասարակ մատուռ, պարսպապատ, որի դռան մօտի մի խաչքարի վրայ արձանագրուած է.

Ես անարժան Աթանէս երէցս կանգնեցի խաչս փրկելութեան հոգւոյ իմոյ թվ. ՌԹ.

Այս մատրան հանդէպ, լճափին, կայ մի հրադիսային բլուր՝ ձաղառաձև զաղաթով, որի վրայ նկատելի են միջանի շինութեան հետքեր: Մի բնական մեծ այր ևս համարւում է իբր վաղեմի ձգնարան:

Այս ու այն կողմ կանգնեցրած բազմաթիւ խաչքարերի մէջ առանձին ուշադրութեան արժանի է գիւղի արևմտեան կողմում կանգնեցրած՝ որ յայտնի է խազախաջ, այսինքն հազը բժշկող տնունով և որի տակ աւանդաբար պատմւում է, թէ հանգչում է երկու դժբաղդ սիրահարների աճիւնը:

Այժմեան գիւղը բռնում է 36 դես. և 480 բ. սաժէն տարածութիւն. ունի միջանի լայն փողոցներ, միւսները ծուռնուծուռ են և նեղ: Տները մեծագոյն մասը հին զխառններ է, փոքրագոյնը՝ նոր՝ ևրոպական ձևի, մի և երկյարկանի: Անագին ընդարձակութեան գաւիթներում ոչ մի ծառ չէ տնկուած:

Բնակիչները գաղթել են Արծափից և Ալաշկերտից. ընդամենը՝ 450 տուն են, 1683 ար. 1598 իգական, ի միասին՝ 3281 հոգի:

Միւս գիւղերի հետ համեմատելով՝ սրանք մտաւորապէս աւելի բարձր են, սակայն բարոյապէս աւելի ընկած, քնքշացած և ծոյլ: Սիրահար են հարբեցութեան և՛ խումարի Գիւղում կան մի քանի գինեւոներ, ուր ամբողջօրը գիւղացիները խմբուած՝ վէզերով խումար են խաղում: Ներկայ 1908 թ. բացուել է հայոց հեղեցական-ծխական միդասեան դպրոց: Պարապում են գլխաւորապէս՝ երկրագործութեամբ. ունին 2151 դես. և 1948 ք. սաժէն՝ վարելահող, մասամբ էլ անասնապահութեամբ, որովհետև 23 դես. 2012 ք. սաժէն խոտատեղի և 851 դես. 350 ք. սաժէն արօտատեղի ունին: Զկնորութիւնը նոյնպէս այս գիւղում շատ տարածուած է, ինչպէս և՛ նաւակներ շինելն ու նրանց գործածելը:

Փաշարենտ կամ Մանժատ Աղալու. (62°46'40"—40°20'25"). Տարածուած է Նոր-Բայազէտից արեւմտահարաւ, և զրեթէ նրա հետ միացած է: Բնում է 42 դես. 176 ք. սաժէն տարածութիւն, որից 37 դ. 1056 ք. ս. ծածկուած է շինութիւններով: Գիւղի արեւելահիւսիսային կողմում բարձրանում է մի մեծ բլուր, որի վրայ նկատելի են ամրոցի հետքեր: Մի քանի յորդ և սառնորակ աղբիւրներ առատութեամբ բոխում են այս գիւղում և խառնուելով Ղուլալուի աղբիւրների հետ՝ կազմում են Գեօզլայ գետակը, որ թափւում է Սևանայ լիճը՝ Նորադուղի մօտ:

Փաշաքանտը հնումը կոչուել է Առնեղ և այդ միջոցի եկեղեցին էլ այժմ բաւական խնամքով պահւում է: Սա սրբատաշ քարերով շինուած անսիւն, խաչաձև, դմբէթաղարդ մի փոքրիկ շէնք է: Երբ 1862 թ. կիսաքանդ կաթուղիկէն վերանորոգել են, դռնը են մի բաւական մաշուած արձանազրութիւն կրող քար, ուր յիշատակուած է եղել, որ եկեղեցին շինել է Առնեղ գիւղի Շաղուրաթ իշխանը 898 թուին: Այս արձանազրութիւնը նորից նոյնութեամբ փորագրել են տուել եկեղեցու արեւելեան պատի վրայ:

Սա Շաղուրաթ իշխան Առնեղի կառուցի այս սուրբ Աստուածածին եկեղեցիւ ի հիմանէ. թվին Փրկչին ՊՂԸ (=898) և Հայոց թվին ՅԽԷ:

Այս Աստուածածին եկեղեցուն կից եղել է նաև մի ուրիշ եկեղեցի, ս. Գրիգոր անուանով, նրա պէս փոքր, միայն նրանից շատ աւելի խարխուլ: Գիւղացիները քանդել են այս վերջինը և նորը կառուցել, դարձեալ կից առաջինին, այնպէս որ նրա միակ դուռը բացւում է սրա մէջ: Այս նոր շինուած եկեղեցու պատի մէջ հին-

քարերից ընկել է նաև մինը, որ կրում է հետևեալ արձանագրութիւնը.

Կամաւն Այ Տատլուդանս դուստր պարոն Դաւթին՝ կենաց կից Փիրհամզայ Աղին՝ որ նորոգեցի շրջապատ սուրբ Գրիգորս յիշատակ հոգւոյ իմոյ. Թվ. ՋՂԸ (=1549).

Բացի այս եկեղեցիներից՝ աղբիւրի գլխին կայ մի փոքրիկ մատուռ, իսկ գիւղից դուրս՝ մի աւերակ եկեղեցի, որի մօտ մի քանի տապանաքարերից մինի վրայ գրուած է.

Այս է հանգիստ տէր Գասպարին. Թվ. ՌՃԽ (=1691)

Դիւղի ստորին մասը ծածկուած է ուռնիներով, Հետզհետէ շինուած են կանոնաւոր տներ, մինչդեռ հները բոլորն էլ զլխատներ են: Բնակիչները հայեր են Հին-Բայազէտի զանազան գիւղերից գաղթած 1830 թ. ընդամենը 378 տուն, 1530 ար. 1341 իգ. ի միասին՝ 2871 հոգի:

Դիւղը բարոյապէս բաւական ընկած է, գիւղացիները ծոյլ և հարբեցող:

Պարապուտ են երկրագործութեամբ և մասամբ անասնապահութեամբ: Ունին 2197 դեւ. 1174 ք. ս. վարելահող, 149 դ. 1440 ք. ս. խոտատեղի և 921 դ. 332 ք. ս. արօտատեղի:

Քեցսամաճատ. ($62^{\circ}46'50''$ — $40^{\circ}19'37''$). —Սփռուած է մի հարթ տարածութեան վրայ, բռնելով 51 դեւ. 840 ք. ս. տեղ, որից միայն 25 դեւ. 1440 ք. սաժէնը ծածկուած է շինութիւններով: Հնումը սա կոչուել է Գանձակ կամ Գանձաղանտառ, և ունի մի հինաւուրց եկեղեցի, միանգամայն նման Նորադուղի եկեղեցուն: Սա այժմ փոքր ինչ վերանորոգուած է, փայտով ծածկուած և իբր գիւղական եկեղեցի է ծառայում: Սրա վրայ կան հետևեալ արձանագրութիւնները:

Արևմտեան պատի վրայ.

Ես Կունտուզ եւ իմ որդիքն և Գանձակայ մեծ և փոքր տուաւ վախճման զկալերն շրջապատ եկեղեցւոյս:

Ես Մարտիրոս երէցս զորմն շինեցի յիշատակ ծնողաց իմոց:

Հիւսիսային որմի վրայ.

Այս է մասն Հոռումին Թվ. ՌԽԴ (=1595):

Մի քիչ ներքեւ.

Կամաւն Աստուծոյ ես Ստեփաննոս քահանայ որդի Կունտուզ աղին շինեցի զշրջապատ եկեղեցւոյս յիշատակ ինձ եւ մաւրն իմոյ Արդունին եւ եղբարց իմոց:

Եկեղեցու մէջ, հարաւային կողմում կայ մի մեծ տապանա-
քար՝ հետեւեալ տապանագրով.

ԹՎ. ԶԿԲ. (=1513) Այս է հանդիստ Ագարիային,
որ էր առաջնորդ Գանձակիս. յիշեցէք ի Քրիստոս: Ես
Գունտուզ աղէս կանգնեցի զտապանս:

Բնակիչները հայեր են, զաղթած Ալաշկերտի Դիզա գիւղից,
ընդամենը 242 տուն են, 989 ար. 870 իդ. իմիասին 1859
հոգի:

Պարապուենքը նոյնն է՝ երկրագործութիւն և անասնապա-
հութիւն: Ունին 1587 դ. 1440 ք. սաժէն վարելահող, 967 դ.
1470 ք. սաժէն արօտատեղի:

Քեարիմ-Քեանդ. (62° 43' 1"—40° 18' 25"). — Տեղաւորուած
է Ղարաուլ-Քափա լեռան լանջին, բռնում է 8 դես. 1680 ք.
սաժէն տարածութիւն: Հնումը սա կոչուել է Քիթամաշլն և գիւ-
ղից դուրս արեւմտեան կողմը կայ մի հին եկեղեցի, ս. Յովհան-
նէս անուանով, որի վրայ ճշ մի արձանագրութիւն չկայ:

Բնակիչները Ալաշկերտի Դիզա գիւղացի հայեր են, որ նախ
զաղթել են Քեօսամահմատ գիւղը և ապա՝ այստեղ վերաբնա-
կուել: Ընդամենը 72 տուն են, 301 ար. 285 իդ. ի միասին՝ 586
հոգի: Պարապուէն են երկրագործութեամբ և անասնապահութեամբ.
ունեն 590 դես. վարելահող, և 325 դ. 1180 ք. ս. արօտատեղի:

Հաջի-Մուխան կամ Հաջի-Աւդի և կամ Աճամ-խան (62° 43'
10"—40° 28' 35"). — Այս գիւղը Հաճի Մուխան է կոչուում այն
պատճառով, որ 1700 թ. Տաճկաց Հաճի Մուխան զօրապետը այս-
տեղ բանակ է դրել, և երբ նրան հալածելով կանդ է առել այս-
տեղ Հաճի Աւդի պարսից զօրապետը՝ վերակոչուել է Հաջի-Աւդի
կամ Աճամ (պարսից) խան (զօրապետ):

Հնումը հայկական գիւղ է եղել, թէև անունը յայտնի չէ,
որովհետև կայ մի աւեր եկեղեցի և մի քանի խաչքարեր:

Եկեղեցու վերան եղել են հետեւեալ արձանագրութիւններն,
որ այժմ բոլորովին ոչնչացրել են.

Աստուած ողորմի Սարգսի և Ալէքսոյի և Յակոբայ
ծնողացն իւր. Ստաթէ:

Խաչքարերի վրայ.

Ես Ովաննէսս կանգնեցի սուրբ խաչս ի փրկութիւն
հոգւոյն իմոյ. յիշեցէք ի Քս.

Սուրբ խաչս բարեխոս Պէկնազարին:

Գերեզմանաքարերի վրայ.

Այս է հանգիստ Գրիգորի. Թվ. ՌՃԾ (=1701 թ. Բ).

Այս է հանգիստ Մկրտչին ՌՃ (=1651).

Այս է հանգիստ Էնգգարին Թվ. ՌՃԾ (=1701).

Այս է հանգիստ Աճապին.

Այս է հանգիստ Գասապարին *).

Այժմեան գիւղն իւր ծուռն ու մուռ, կեղտոտ փողոցներով, հասարակ, անառողջապահիկ խուղերով տեղաւորուած է Սեանայ լճի ափին, մի տափարակի վրայ, և բռնում է 20 դ. 1536 ք. ս. տարածութիւն, ամրոցովին պատած շինութիւններով, Սրա միջոցն է անցնում դէպի Երևան տանող ճանապարհը և այստեղ է դառնում փոստային կայարանը՝ մի անպիտան շէնքով: Գիւղում կայ երկու խանութ, որ հայերին է պատկանում: Այժմեան բնակիչները թուրքեր են, 130 տուն, 530 ար. 504 իգ. միասին՝ 1034 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1010 դ. 1806 ք. ս. վարելահող. 1070 դ. 352 ք. ս. արօտատեղի:

Աղղիբի. (62° 44' 20"—40° 27' 25")— Տեղաւորուած է խճուղւ կողքին, մի տափարակի վրայ. բռնում է 17 դ. տարածութիւն: Գիւղում ուշադրութեան արժանի ոչինչ չկայ, բացի այն, որ այստեղ է դառնում այս գիւղական հասարակութեան դատարանը: Գիւղից փոքր ինչ հեռու ընկած է մի կոտրուած խաչքար, որի վրայ գրուած է.

Ի Թուրս ՉիԳ. (=1274 թ. Բ.). Ես Աբուսալմայս կանգնեցի զխաչս. որք երկրպագէք Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց:

Գիւղի այժմեան բնակիչները թուրքեր են. 116 տուն. 413 ար. 342 իգ. միասին 755 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 833 դ. 1800 ք. ս. վարելահող, 161 դ. 480 ք. ս. խոտատեղի և 744 դ. 1920 ք. ս. արօտատեղի:

Աղ-Ղաւ. (62° 46' 50"—40° 26' 40"). Սեղմուած է մի փոքրիկ թերակղզու վրայ, ուր դեռ մնում են հին ամրոցի կարմիր, սրբատաշ քարից շինուած կիսակործան պարիսպն ու բուրգերը: Թէ ամրոցի մէջ և թէ դուրսը նկատելի են տների հիմնապատեր, սակայն եկեղեցի կամ խաչքար բոլորովին չեն երևում: Գիւղը բռնում է 3 դ. 1232 ք. ս. տարածութիւն. բնակիչները թուրքեր են, 62 տուն. 218 ար. 206 իգ. միասին 424 հոգի: Պա-

*) Տես Սմբատեան՝ Գեղարքունիք եր. 430.

բաղում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 335 դ. 366 ք. ս. վարելահող, և 376 դ. 1414 ք. ս. արօտատեղի: Այրի վանք. ($62^{\circ}45'55''$ — $40^{\circ}26'20''$).—Հետեղուած է Սևանայ լճի ափին, մի տափարակի վրայ և շատ գեղեցիկ տեսք ունի: Գիւղի հարաւային կողմում մի փոքրիկ հրուանդանի վրայ բարձրանում է Հայր Յովհաննավանքը կամ Հայրավանքը և կամ Այրի վանքը¹⁾, որի անունն էլ այժմ գիւղն է կրում:

Գիւղը բռնում է 7 դ. 964 ք. ս. տարածութիւն, և ոչ մի ուշագրաւ բան չունի, բացի մի հին մատուռից, որի շուրջը կան միջանի խաչքարեր: Վերջիններիս վրայ տապանադրեր չկան, իսկ մատուռի դռան ճակատին գրուած է.

ՈՂ (=1154 թ. Բ.) խաչս կանգնեցաւ:

Այժմեան բնակիչները թուրքեր են. 96 տուն. 380 ար. 328 իգ. միասին 708 հոգի: Պարապում են երկրագործութեամբ: Ունին 596 դ. 1292 ք. ս. վարելահող, և 730 դ. 672 ք. ս. արօտատեղի:

Էֆէնտի-բնտ կամ Ռախման-բնտ.—($62^{\circ}41'15''$ — $40^{\circ}30'20''$).—

Մի փոքրիկ, անշան գիւղ է, ծովի ափին, 1 դեսեստին 2208 ք. ս. տարածութեամբ: Բնակիչները շիա թուրքեր են, 72 տուն, 253 ար. 226 իգ. միասին 473 հոգի. պարապմունքը նոյնն է. ունին 333 դ. 364 ք. ս. վարելահող և 781 դ. 828 ք. ս. արօտատեղի:

Բուղու-Հուսէին-Սարաջու. ($62^{\circ}37'30''$ — $40^{\circ}30'45''$).—Տեղաւորուած է Սևանայ լճի ափին, խճուղու ճանապարհի վրայ. բռնում է 2 դ. 960 ք. ս. տարածութիւն: Գիւղում կայ հայկական մի եկեղեցու և մի ձիթահանքի հիմնադատեր, ինչպէս և միջանի գերեզմանաքարեր՝ որոնց վրայ կարդացւում են.

Այս է հանգիստ մեկիք Ռափայէլի որդի Ռուստամ-բէկին. թվին ՌՃԲ. (=1653):

Այս է հանգիստ Գիւլնազար խաթուն Օվսանին. թվ. ՌՃԸ (=1691):

Այս է հանգիստ Շամիրին. թվին ՌՃԾԷ (=1708):

Այժմեան բնակիչները թուրքեր են. 112 տուն. 338 ար. 320 իգ. միասին՝ 658 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 551 դ. 1200 ք. ս. վարելահող, 691 դ. 540 ք. ս. արօտատեղի:

¹⁾ Տես նշանաւոր վանքերի բաժնում: